2025 ԹՎԱԿԱՆԻ ԼՈԼԻԿԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի N -L

2025 ԹՎԱԿԱՆԻ ԼՈԼԻԿԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը և «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 21-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝ 2025 թվականի լոլիկի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումը՝ համաձայն հավելվածի։

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝

- սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզպետների հետ համատեղ մշակել և հաստատել սույն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի շրջանակներում սուբսիդավորման տրամադրման ընթացակարգը.
- սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել սույն որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակներում տոմատի մածուկի արտադրության նպատակով լոլիկի մթերումների ընթացքի վերաբերյալ օպերատիվ տեղեկության հավաքագրման նպատակով մթերվող լոլիկի քանակների փաստաթղթավորման և տեղեկության տրամադրման ընթացակարգը։

3. 2025 թվականի տոմատի մածուկի արտադրության նպատակով լոլիկի մթերումներ իրականացնող տնտեսավարողների մթերման կետերում մթերումների գործընթացի մշտադիտարկումը կատարվում է մարզպետների աշխատակազմերի համակարգմամբ։

4. Սույն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի շրջանակներում առաջացող ֆինանսական պարտավորությունները կիրականացվեն

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերի շրջանակներում հատկացված ֆինանսական միջոցների հաշվին՝ կատարելով համապատասխան վերաբաշխումներ։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի օգոստոսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզպետների աշխատակազմերի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրված տոմատի մածուկի արտադրության նպատակով փաստացի մթերված լոլիկի ծավալների վրա։

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Ն. Փաշինյան